Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (6 դասաժամ), զինղեկի (0,5 դրույք, ՆԶՊ 2 դասաժամ), ինֆորմատիկայի (3 դասաժամ), տեխնոլոգիայի (աղջիկների 3 դասաժամ, տղաների 3 դասաժամ), հասարակագիտության (2 դասաժամ) և բնագիտություն (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),

- 1 լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչև հուլիսի 2-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը,** բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021 թ. հուլիսի 8-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Ծաթերի հիմնական դպրոցում, հասցեն՝ Լոռու մարզ, գ. Ծաթեր, 7 փող., շենք 10:

Տեղեկությունների համար զանգահարել 091-19-92-07 հեռախոսահամարով: